ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 24/Ե-20

< 10 > < 01 >2024թ

ք.Արտաշատ

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրատու/ մի կողմից և ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի մ/դ ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Նարինե Անդրեասյանի որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա /այսուհետև Նվիրառու/ մյուս կողմից, հիմք ընդունելով «2024թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 «2024 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի (ըստ դասիչների) 1146 ծրագրի «Հանրակրթության ծրագիր» 12002 <հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցում>: Հատկացումները օգտագր Դիմիտրովի մ/դ 2024թ հաստատված ծախսերի նախահաշվին համապատասխան:

8 մանկավարժի համար

42 աշակերտի համար

2. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

2.1 Սույն պայմանագրով պատվիրատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահված լիազորությունները պատշաճ կատարելու նպատակով, կատարողին տրամադրում է

1165.6 հազ. դրամ այդ թվում՝

225.5 հազ. դրամ մանկավարժի համար

940.1 հազ. դրամ աշակերտի համար

2.2 Նվիրատուն վճարումները իրականացնում է ՀՀ պետական բյուջեով հաստատված եռամսյակային համամասնությունների շրջանակներում:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Սույն պայմանագրով սահմանված պայմանների չկատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Սույն թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մանկավարժների և աշակերտների թվի ավելացման կամ պակասեցման հետ կապված պայմանագիրը ենթակա է փոփոխման:
Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր համաձայնագիր կնքելու միջոցով:

4.2 Սույն պայմանագիրը իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է մինչև 2024թվականի դեկտեմբերի 25-ը:

4.3 Սույն պայմանագիրը կազմված է մեկ էջից, գրված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ
ք. Արտաշատ, Օգոստոսի 23/60
Հ/Հ 900411002570
ՀՎՀՀ 04245019
Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
ստորագրություն

Կ.Տ.

ՆՎԻՐԱՌՈՒ

Դիմիտրովի մ/դ
ՀՀ ֆինանսների նախարարության գ/վ
Հ/Հ 900418000338
ՀՎՀՀ 04206226
Դպրոցի տնօրեն

Ն.Անդրեասյան
ստորագրություն

Կ.Տ.